

«ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ» ԱՌԱՍՊԵԼԻ ՌԵՍՈՒՑՄԱՆ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մովսես Խորենացու «Հայկ և Բել» առասպելը հայկական հանրակրթական դպրոցի ծրագրում որպես ուսուցանվող թեմա դրված է երկու անգամ՝ ա) վեցերորդ դասարանում, բ) 9-րդ դասարանում¹:

Հասկանալի է, որ երկու տարբեր դասարաններում ուսուցման մակարդակը տարբեր է կախված նախ աշակերտների տարիքային առանձնահատկություններից և ուսուցման խնդիրների պահանջների որոշակի չափանիշներից:

Վեցերորդ դասարանում աշակերտը սոսկ ընթերցում է «Հայկի ապստամբության մասին» և «Պատերազմի և Բելի մահվան մասին» հատվածները պատմահոր երկի վիպասանական բաժնի մյուս համանման բանահյուսական մասերից տարանջատված, իսկ 9-րդ դասարանում նույն առասպելը մատուցվում է գրականագիտական խորքային մեկնաբանմամբ, ու աշակերտը ոչ միայն յուրացնում է առասպելի սյուժեն, այլև ինքը կարողանում է մեկնաբանել առասպելի ժանրային և գրական առանձնահատկություններն, իհարկե, ավագ դպրոցին ներկայացվող պահանջներին համեմատ: Երկու տարբեր դասարաններում էլ ուսուցիչը պահանջվում է մեծ հմտություն իր նպատակին անշեղորեն հասնելու համար: Իսկ այդ անվերապ հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է, թե որքանով է ուսուցիչը պատկերացնում առասպելի գիտական նշանակությունը և ապա մանկավարժական-դաստիարակչական նպատակը:

Առասպելը ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից է, եթե ոչ ամենահինը: Այդ մասին վկայում են բազմաթիվ մեկնողական աղբյուրներ թե հնում և թե նոր ժամանակներում: Թվարկենք դրանցից մի քանիսը: Մովսես Խորենացին երկրորդն է Եզնիկ Կողբացուց հետո, որ հատուկ ուշադրություն է արժանացնում հայ ժողովրդական առասպելները և իր երկի «Հայոց պատմության» մեջ մի քանի անգամ բացատրում է գրական այդ հնագույն տեսակի առանձնահատկությունները: Իր գրքի «Պարսից առասպելները» խորագիրը կրող հավելվածում նա գրում է «Բյուրասպի Աժդահակի մասին» և կշտամբելով իր երիտասարդ մեկենասին իշխան Սահակ Բագրատունուն, գրում է. «Ի՞նչ կարոտություն ունես այս սուտ առասպելներին կամ ի՞նչ կարիք այսպիսի շինծու, անմիտ և անհանճար գրույցների: Մի՞թե սրանք հույների պե՞րժ ու ողորկ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թաքնված են ճշմարիտ

¹ Տես հայոց լեզու և գրականություն, գրականության ծրագրեր, Հանրակրթական դպրոցի 4-10-րդ դասարանների համար, Երևան, 2003, էջ 12, էջ 20:

իրողություններ»²: Սովսես Խորենացին իր այս սահմանման մեջ շեշտում է առասպելի երկու կարևոր հատկանիշը

ա) պատմական բնույթը,

բ) գեղարվեստական արժեքը:

«Նոր դասագիրք հայկազեան լեզուի» հեղինակները նույնպես անդրադառնում են այդ բառի բացատրությանը, ներկայացնում այն տարբեր մեկնակետերից, բերում մի քանի բառ – հոդվածներ: Դրանցից մեկում առասպելը բնորոշվում է որպես «գրոյց վճռական և խորհրդալուր»: Կա նաև այլ բացատրություն. «Առասացություն մտացածին, յօդեալ պատմութիւն, սուտ գրոյց, շինծու գրոյց»³: Այս բառահոդվածներում մեջբերվում է նաև Սովսես Խորենացու վերոհիշյալ սահմանումը, ինչպես նաև օրինակներ են նշվում Աստվածաշնչից, Պլատոնից, Եզնիկ Կողբացուց, Ագաթանգեղոսից, Թովմա Արծրունուց, Ներսես Շնորհալուց և ուրիշ մատենագիրների գործերից: Առասպելը հին հույների կյանքում ունեցել է կիրառական նշանակություն. դրա վերաբերյալ պերճախոս վկայություն ենք գտնում 13-րդ դարի նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» աշխատության մեջ. «Ձայս իբրև ընթերցան, գովեցին զհաւատս հայոց ամենայն իմաստունքն յունաց: Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասացեն ի զինարբուս և ի հարսանիս»⁴: Ասվածից պարզ է դառնում, որ դեռևս 12-13-րդ դարերում հայ հին վիպասքի հատվածները որպես երգ արտասանվում էին քրիստոնյա հայերի խնջույքների ու հարսանիքների ժամանակ: Եվ այս երևույթը կանխելու համար Ներսես Շնորհալին գրում է իր հրաշալի հանելուկները, որոնցում, ի դեպ, կան Աստվածաշնչային մոտիվներով ստեղծվածներ⁵, որպեսզի մոռացնել տա և գործածությունից դուրս հանի հեթանոսական ժամանակներից եկող առասպելները: 1996 թվականին Փարիզում հրատարակված գրականության դասականոման ձեռնարկում զետեղված է գրական ժանրերի և հասկացությունների համառոտ բառարան: Առասպելն այդ բառարանում ներկայացված է հետևյալ

² Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Սո Սախախյանի, Երևան, 1981, էջ 107:

³ Տես Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 1, Ա-Կ, Երևան, 1979, էջ 292-293:

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 147:

⁵ Կաթողիկոսն էր անդալատ,
Յիւր վիճակէն քիչ էր ի չատ,
Այնչափ մեղանք արար նա շատ
Տէրն իւր վճիռ մահու եհատ: (Աղամ)
Վեր արեւելք կայր քաղաք մի
Խիստ բարեւտ եւ մրգալի,
Բուրաստան մեծւ աղուոր այգի,
Գերիս յիւր մէջն պիտէի: (Դրախտ)

(Տես Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 201-202:

ծնով Առասպել – լեզենդար պատում, որը ներկայացնում է աշխարհի ծագումը, աղբյուր մարդկության մեծ խնդիրների համար⁶:

Այս սահմանումը և Մովսես Խորենացու սահմանումը ունեն շփման կետեր: Հայոց համրակրթական դպրոցի տարբեր դասարաններում ուսուցանվող «Հայկ և Բել» առասպելը պատմում է հայ ազգի ծագման մասին, հայերի նախահոր մասին: Ի՞նչ աղբյուրներ են հայտնի «Հայկ և Բել» առասպելի վերաբերյալ: Առաջին աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, երկրորդը՝ Սեբեոսի պատմությունը, երրորդը՝ Գարեգին Սրվանձտյանի վերապատմած հայկական հինավուրց գրույցը:

7-րդ դարի նշանավոր պատմիչ Սեբեոսը համառոտած է պատմում «Հայկ և Բել» առասպելը: Կերպարների բնութագիրը նույնն է, պատումի ընթացքը ևս, ինչպես Մովսես Խորենացու մոտ, սակայն բանահյուսական նյութի փոխադրումը անկասկած գիջում է քերթողահոր մշակմանը:

Սեբեոսը գրում է. «Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիւրն ոչ ծանաչելով զբնութիւն, այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: Ապա յայնմ ժամանակի Հայկն Արեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բելայ արքայի, արհամարհեաց զնա աստուած կոչել: Անդ Բէլ ի վերայ Հայկին յարծակեալ մարտիւ, իսկ Հայկն արի՛ աղեղամբ հալածեաց զնա»⁷:

Սեբեոսի մոտ առասպելի մշակված տարբերակը չունի քերթողահոր օրինակի կուռ կառուցվածքը, որի մեջ կրկնություններ և հարասումներ գոյություն չունեն: Մինչդեռ Սեբեոսի մոտ դրանք տեսնում ենք. «Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զիրամանս նորա, բայց մի ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա եւ ոչ կանգներ ի տան իւրում զպատկեր նորա եւ ոչ մեծարէր զնա աստուածուրէն շքով»⁸: Սա կրկնում է վերոհիշյալ հատվածը:

Մովսես Խորենացին Հայկ նահապետին կերտել է որպես ազգային հերոսի կատարելատիպ: Ընթերցողը նրան տեսնում է, զգում է նրա արտաքինի և հոգու գեղեցկությունը. նա հիշեցնում է հունական էպոսի կատարելատիպ Աքիլլեսին: Մինչդեռ Սեբեոսի Հայկը առավել կենցաղային է. դա երևում է այն երկխոսության մեջ, որում հանդես են գալիս Հայկը և Բելը.

Պատասխանի ետ Բէլ եւ ասէ. «Վասն այնորիկ, զի մի անկցիս ի ձեռս մանկտոյ իմոյ եւ մեռանիցիս, այլ եկ ի ձեռս իմ եւ կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»:

⁶ D.Labouret, A.Menuier, Les methods du français au lycée, Bordas, 1996, p. 286.

⁷ Սեբեոս, Պատմութիւն, աշխատասիրությամբ Գ Վ Աբգարյանի, Երևան, 1979, էջ 48:

⁸ Եւսկն տեղում, էջ 49:

Պատասխանի ետ մնա Հայկն եւ ասէ. «Շուն ես դու եւ յերամակէ շանց՝ դու եւ ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսաւոր ի քեզ զկապարճս իմ»⁹:

Սովսես Խորենացու Հայկը չի գործածում ոչ մի վիրավորական բառ, նրա կերպարը վսեմ է:

Գարեգին Սրվանձտյանցը իր «Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» մեծարժեք գրքույկում պատմում է Պատվան գյուղի մոտ դեպի Նեմրուք լեռը ձգվող ժամապերիի վրա իր տեսած քարե զանգվածի մասին. «որոնք հեռվէ և մութ ժամանակ կրնան խաբել զմարդ, թե կարավան են անոնք, կամ մարդ և ուղտ: Տեղացիք Բելի ուղտեր և ուղտապաններ կ'անվանեն զանոնք...»¹⁰: Հետո բանագետը վերապատմում է Հայկի ու Բելի զրոյացը ըստ ժողովրդական վիպասացների:

Բանագիտության մեջ վաղուց նկատված է տարբեր ժողովուրդների առասպելների և էպոսների ընդհանրությունները: Սիա հենց այս նկատի ունենալով Հայկի կերպարը մեր հենրը համեմատել են հունական դիցաբանության Օրիոնի հետ և Աստվածաշնչի Օրիոն համաստեղությունը թարգմանել են Հայկ¹¹: Առասպելի նշանակությունը մարդկության գեղարվեստական մտածողության և գիտապատմական ընկալումներում դրսևորվել է նշանավոր մարդկանց դիտարկումներում:

Բերեք երեք տարբեր մշակույթների ներկայացուցիչների կարծիքներ: Հայագետ, կովկասագետ, լեզվաբան, արվեստագետ, բանասեր և բազմալեզվագետ, հզոր գիտնական Նիկոլայոս Սառը գրում է. «Վրաց տարեգիրը պատմում է, որ Վրաստանը բնակեցված էր Հայկի հարազատ եղբայրներով. Հայկը հայերի նախահայրն է» («Грузинский летописец рассказывает, что Грузия была заселена родными братьями Найка. Найк — это родо-начальник армян»)¹²:

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին 1964 թվականին Փարիզում հրատարակում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի ֆրանսերեն թարգմանությունը հայ ժողովրդի գրականությանն ու պատմությանը քաջատեղյակ փաստեր պարունակող մի առաջաբանով: Նա գրում է. «Հինգերորդ դարի հայ պատմիչների մեջ կա մեկը, որը գերազանց է մյուսներից. դա Սովսես

⁹ Նույն տեղում, էջ 50:

¹⁰ Գ Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 50:

¹¹ Տես Ս.Արեղյան, Երկեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 30-35: Օրիոնը ըստ հունական դիցաբանության եղել է հսկա, Պոսեյդոնի և Հերայի որդին էր: Փառաբանված էր որպես որսորդ: Պոսեյդոնը նրան օժտել էր ջրերի վրա քայլելու ձիրքով: Օրիոնը գեղեցիկ էր և նրան առևանգում է ինս աստվածուհին չդիմանալով նրա սիրուն: Օրիոնը սպանվում է Արտեմիսի նետերից (տես Мифы народов мира, т. 2, к-я, Москва, 1982, стр. 262):

¹² Н.Я.Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 27.

հորենացին է: Նա չբավարարվեց գրելու միայն ժամանակագրություն, նա կանեցավ հյուսել իր ազգի Պատմությունը հնագույն ժամանակներից սկսած: Դրա համար դիմեց այն հույն, պարսիկ, ասորի, քաղդեացի պատմիչներին, որոնց երկերը կարող էր գտնել, բաղդատեց նրանց հաղորդածը Աստվածաշնչի հիմնականների հետ, նա պեղեց ազգային հնությունները, նույնիսկ հետազոտեց բանավոր ավանդույթն ու պատմական դեպքերի արձագանքները»¹³: Ֆ.Ֆեյդիի կարծիքով հորենացին պատմական երգերի հիման վրա կերտել է Ածղահակին հաղթող Տիգրան Առաջինի կերպարը¹⁴, ... որը սերում էր հերոս Դայկից»¹⁵:

Առասպելների մարդկային կյանքում ունեցած ձևերի մասին կարևոր նկատում ունի մեր ժամանակների մեծատաղանդ գրողներից մեկը Զինգիզ Այտմատովը: Նա իր «Եվ դարից երկար է տևում օրը» վեպի մասին գրում է. «Ինչպես իմ նախկին ստեղծագործություններում, այս անգամ էլ ես հենվում եմ լեգենդների և առասպելների, ավանդությունների վրա, որպես փորձի տրված ժառանգություն նախորդ սերունդներից: Երկար ննջած և կարծես հավերժական մոռացման մատնված առասպելները, լեգենդներն ու ավանդությունները վերակենդանանում են մարդկային հիշողության մեջ լոկ այն ժամանակ, երբ ծագում է նրանց անհրաժեշտությունը, այսինքն այն ժամանակ, երբ կյանքի ճշմարտությունը պահանջում է համապատասխան գեղարվեստական արտահայտություն»¹⁶: Դեռևս հինգերորդ դարում Զինգիզ Այտմատովի մոտեցումը բանահյուսության նկատմամբ ունեցել է հենց մեր քերթողահայրը, որը պետականությունը կորցրած հայ ժողովրդի ազգային գիտակցությունը կենդանացնելու ու ամրապնդելու համար կերտեց նրանց հերոսական նախահոր անթերի կերպարը:

Թե վեցերորդ և թե իններորդ դասարանում «Դայկ և Բել» առասպելն ուսուցանելիս ուսուցիչը այս փաստերի քաջատեղյակությամբ պետք է մշակի հայրենասիրական բովանդակություն ունեցող բանահյուսական-գրական-գեղարվեստական բացառիկ այս հյուսվածքի դասավանդման մեթոդիկան, այլպես նրա մատուցումը չի հենվի ներքին խոր լիցքերի վրա, որոնք նա փոխանցելու է աշակերտներին:

Այս ոչ ծավալուն հոդվածում խոսք գնաց «Դայկ և Բել» առասպելի ուսուցման գիտական հիմքի մասին լոկ, իսկ ուսուցման մեթոդի ներկայացումը այլ հետազոտության նյութ է, որը հենվելու է վերոշարադրվածի հիմքի վրա:

¹³ David de Sassoun, Callimard, 1964, p. 38.

¹⁴ Տիգրան Առաջինի մասին երկար գրել է Ջսենոֆոնը իր «Կյուրոպեդիայում», որում ներկայացված են Տիգրան երվանդյանի և Պարսից Աքե մենյան հարստության հիմնադիր Կյուրոսի փոխհարաբերությունները (տես Ջսենոֆոն, Կիրոսի խրատու պատմությունը, քարգծ. Դ.Յովսեփ Գաթրճյան, Վիեննա, 1843, էջ 141-173):

¹⁵ David de Sassoun, p. 38-39.

¹⁶ Фольклор, Поэтика и трагедии, Москва, 1982, стр. 36.